

ԿԱՅԱՐԱՆ ԱՆՀԱՅՏՈՒՄ

Երբ արթնացա, թվաց, թե անհայտության մեջ եմ: Թվում էր, թե լողում եմ խավարում, կարծես, ալարկոտ օրորվող, բայց երբեք չհոսող ջրի մեջ: Ինչպես դիակ, որին ալիքներն ամենախորքերից դուրս են շարտել ջրի երես: Ու գնում էի մեղմ օրորվելով և չէի կարողանում գոնե մի հենարան գտնել այդ անլույս խավարում: Ես չէի զգում ոչ ոտքերս, ոչ ձեռքերս, ասես, սեփականս չէին: Լսողություն, տեսողություն, հոտառություն... դրանք էլ, կարծես անջատած լինեին: Ոչինչ չէր երևում, չէր լսվում, ոչ մի հոտ անգամ չէր ուզում ինձ օգնել, միայն ծոծրակիս բարձի մեղմ հպումն էր պահպանում կապն իրականության հետ և զգում էի միայն գլուխս:

Մտքերս չափազանց պայծառ էին, չհաշված, որ փոքր ինչ խամրում էին այն գլխացավից, որը սովորաբար ունենում ես, երբ հարամ է լինում քունդ:

Անգամ նրա շնչառությունը չէի լսում, ու թեև նա քնած էր երեխայի պես լուռ ու անվրդով, բայց միևնույն է գիտեի, որ պառկած է կողքիս: Ձեռքս մեկնելու ու նրա դեմքին կամ մետաքսե մազերին դիպչելու փորձն անիմաստ կլիներ, չէ՞ որ ձեռքեր չունեի այլևս, իսկ հուշերս միայն մտքիս հիշողություններն էին, այլ ոչ թե զգացմունքներիս, և ուրվականի պես թափանցիկ էին դրանք՝ ոչ մի հետք չթողնող մաշկիս մեջ:

Ինչքա՞ն հաճախ եմ ես քայլել գոյությանս ամենաեզրով, անվախ (հաստատ հարբած), անըմբռնելի հավասարակշռությամբ գնացել անդունդի վրայի նեղլիկ արահետով նպատակիս ընդառաջ, նպատակիս, որի գեղեցկությունը լուսավորում է ինքն իր դեմքը... Թափառել եմ լապտերների աղոտ լույսով ժլատ լուսավորված պուրակներով, որոնց արճճամոխրագույն եզրերը մի կերպ նշանագրում էին իրականության սահմանները, և թվում էր, միայն նրա համար, որ ավելի համառորեն հերքեին այն: Ճիշտ կույրի պես, թափառում էի փողոցների անթափանց սևության մեջ, որտեղ վխտում էին մարդիկ, բայց և գիտեի, որ մենակ եմ, մենակ:

Միայնակ իմ գլխի հետ (նույնիսկ ոչ լրիվ գլխի, որովհետև բերանս, քիթս, աչքերս ու ականջներս մեռած էին), միայնակ՝ ուղեղիս հետ, որը փորձում էր

հավաքել հիշողություններն այն երեխայի նման, որը հասարակ կուրիկներից թվացյալ անիմաստ պատկերներ է կառուցում:

Նա պարտավոր է կողքս պառկել, չնայած, որ բացարձակ չեմ զգում նրան:

Օրեր առաջ իջա մի գնացքից, որը շարունակեց ուղին Բալկաններով դեպի Աթենք, իսկ ես պետք է տեղափոխում կատարեի և ստիպված սպասեցի հաջորդին, որով էլ հասնելու էի կարպատյան լեռնանցքին: Երբ քարշ էի գալիս կառամատույցում, նույնիսկ կայարանի անունը չիմանալով, մի հարբած զինվորի հանդիպեցի: Խայտաբղետ հագնված հունգարների մեջ միայնակ իր մոխրագույն շինելով՝ հայրենակիցս, օրորվելով քայլում էր և ահավոր հայհոյանքներ ու սպառնալիքներ տեղում, որոնք ինձ ցավեցնում էին ամբողջ կյանքում հիշվող ապտակների նման:

-Օախված անասուններ,- գոռում էր նա,- բոլորդ էլ ծախված անասուններ եք...
Հերիք եղավ... Զգվել եմ արդեն...

Հունգարների հռհռոցների ներքո, նա հայհոյում էր՝ թափահարելով ծանր պայուսակն այն վագոնի ուղղությամբ, որից հենց նոր դուրս էի եկել:

Վագոնի լուսամուտում հայտնվեց մեկի սաղավարտով գլուխը:

- Արի հլը: Հա: Արի ստեղ հլը...

Այդ ժամանակ հարբածը հանեց ատրճանակն ու նշան բռնեց ուղիղ սաղավարտին: Բոլորը սկսեցին խուճապահար աղմկել, իսկ ես, բռնելով հարբածի ձեռքը, ատրճանակը խլեցի ու դրեցի գրպանս: Նա ողջ ուժով փորձում էր դուրս պրծնել ձեռքիցս, բայց ամուր էի բռնել: Բոլորը գոռում էին՝ սաղավարտը, հունգարները, հարբածը, բայց գնացքը հանկարծ շարժվեց տեղից, իսկ ընթացող գնացքի դիմաց անգոր են նույնիսկ սաղավարտները շատ դեպքերում: Ես բաց թողեցի զինվորին, և վերադարձնելով ատրճանակը, հրեցի դեպի ելքը: Նա մոլորված սկսեց քայլել առջևիցս:

Փոքրիկ քաղաքն անապատանման էր: Մարդիկ արագ ցրվեցին և կայարանամերձ հրապարակում ոչ մեկ չմնաց: Ինչ-որ հոգնած, մրտո երկաթուղային մեզ ցույց տվեց փոշոտ հրապարակից այն կողմ՝ կարճիկ ծառերի մեջ թաքնված

պանդուկը: Մենք հատակին զցեցինք մեր պայուսակներն, ու ես գինի պատվիրեցի, այն գարշելի գինին, որից հիմա այսքան վատ եմ զգում: Իմ նոր ծանոթը զայրացած նստել ու լռում էր: Սիգարետ առաջարկեցի, ծխեցինք, ու ես հետաքրքրությամբ սկսեցի զննել նրան: Կրծքին ռազմաճակատային մեդալների սովորական խուրձն էր, երիտասարդ էր, իմ տարիքին, բաց մազերը՝ ծածկելով սպիտակ, հարթ ճակատը, փակում էին աչքերը:

- Այ քեզ կատակ,- ասաց նա հանկարծ,- էս ամեն ինչից ես կուշտ եմ, հասկանո՞ւմ ես...

Նայեցի նրան:

-Հա,- ասաց նա արդեն լուրջ տոնով,- Ես փախնում եմ: Կգնամ Հունգարիայի խորքերը: Ձի լավ եմ քշում, պետք եղած ժամանակ էլ կարող եմ ճաշ սարքել, թող համբուրեն իմ ... Կգա՞ս հետս:

Ես տարուբերեցի գլուխս:

-Ի՞նչ, վախենո՞ւմ ես: Չե՞... Լավ, քո գործն ա: Ես, ինչ էլ լինի, թոնում եմ, լավ մնա:

Նա վեր կացավ, չգիտես ինչու, պայուսակը թողեց գետնին, մի հատ թղթադրամ շպրտեց սեղանին ու նստեց մի անգամ ինձ գլխով անելով, դուրս եկավ:

Ես երկար սպասեցի նրան, չէի հավատում, որ իրոք կարող է փախչել, գնալ երկրի խորքերը: Պահակի պես նստել էի նրա պայուսակի կողքին, խմում էի այդ զզվելի գինին ու սպասում՝ փորձելով ավարտել բարի տիրոջ հետ զրույցը, պատուհանից նայում էի կայարանամերձ հրապարակին, որտեղով երբեմն փոշու ստվար քուլաներ բարձրացնելով մի բեռնակառք էր անցնում, բարձված հաստ ու ծանր գերաններով:

Հետո բիֆշտեքս կերա, էլի խմեցի այդ հիմար գինուց և սիգար ծխեցի: Մթնում էր: Կիսաբաց դռնից քամին, կարծես միտումնավոր, անընդհատ փոշի էր լցնում: Պանդուկի տերը կատակում ու շատախոսում էր հաճախորդների հետ, որոնք նստած իմ պես գինի էին խմում:

Մութն արագ ընկավ: Երբեք չեմ կարողանա հիշել, թե ինչ հասցրեցի մտածել, մինչ նստել ու սպասում էի, խմում էի գինին, միս էի կրծում, նայում էի հաստլիկ տիրոջը, կայարանամերձ հրապարակին և ծխում էր սիգարա...

Այս ամենն անտարբերությամբ սկսեց վերարտադրել ուղեղս, երբ ինձ հիմարի պես օրորում էր այդ գիշերվա սև ջուրը, չիմանալով ժամանակի մասին, ինչ-որ անծանոթ տան մեջ, անհայտ փողոցի վրա, մի աղջկա կողքին, ում դեմքը մի կարգին չտեսա էլ ...

Հետո արագ վազեցի կայարան ու պարզեցի, որ գնացքս արդեն մեկնել է, իսկ հաջորդը միայն առավոտյան կգա: Պանդուկում հաշիվս փակեցի, իրերս դրեցի այն տղայի պայուսակի կողքին և խտացող իրիկնամուրթում գնացի թափառելու անծանոթ քաղաքի փողոցներում: Բոլոր կողմերից ինձ ճնշում էր մոխրագույն, սևամոխրագույն մշուշն ու միայն աղոտ լապտերների լույսում էին անցորդների դեմքերն իրական թվում: Եվ ես էլի ինչ-որ տեղ գինի խմեցի, այս անգամ ավելի լավը, քան նախորդը ու սկսեցի տխուր նայել բարի մոտ կանգնած կնոջ հայացքի լրջությանը, շնչեցի ինչ-որ քացախաթթվային բույրեր, որոնք թափանցում էին ներս խոհանոցից, հետո հաշիվս փակելով, նորից ընկղմվեցի փողոցների մթության մեջ:

«Այս կյանքը,- մտածում էի ես,- իմը չի: Ես պետք է խաղամ սա՝ ինչպես դերս, և խաղում եմ շատ անտաղանդ»:

Արդեն լրիվ մութ էր, մեղմ երկինքը կախվել էր ամառային քաղաքի վրա: Ինչ-որ տեղ պատերազմ էր, անտեսանելի ու չլսելի այստեղ, այս նեղլիկ փողոցների ու կարճիկ ծառերի կողքին աճած տների մեջ: Ինչ-որ տեղ այս համատարած լռության մեջ թաքնված էր պատերազմը: Ես լրիվ միայնակ էի այդ փոքրիկ քաղաքում, շրջապատող մարդիկ ոչ մի կապ չունեին ինձ հետ, այս փոքրիկ ծառիկները, երևի, հանել էին խաղալիքների տուփից ու սոսնձել էին հավասար մայթեզրերի վրա, իսկ այդ ամեն ինչի վրայով ցածր լողում էր երկինքը, ասես, մի անձայն օդանավ, որն ուր որ է՝ կփլվի ներքև...

Հանկարծ ծառի տակ ես մի դեմք տեսա, որը, թվում էր թեթև լույս էր արձակում ներսից: Տխուր աչքեր էին թեթև մազափնջի տակ, որոնք պետք է որ շագանակագույն

լինեին, չնայած այդ գիշերվա մեջ մոխրագույն էին երևում, դալուկ մաշկ, մանկական բերան, որը պետք է որ կարմիր լիներ, չնայած գիշերվա մեջ դա ևս մոխրագույն էր:

-Գնացի՞նք,- ասացի ես:

Բռնեցի նրա ձեռքից, դա մարդու ձեռք էր: Մինչ մենք թափառում էինք այդ անձանոթ քաղաքի անձանոթ փողոցով, իմ ավր դիպավ նրա ավիին, մեր մատները գտան իրար և հյուսվեցին:

-Լույսը չվառես,- ասացի ես, երբ արդեն այն սենյակում էինք, որտեղ այժմ ես, լողում եմ՝ կորած անհաղթ խավարում:

Մթության մեջ զգացի արցունքներից թրջված այտերի հպումը, պոկվեցի ու թռա անդունդը, թռա այնպես, ինչպես թռչում էս ահագոյ բարձր աստիճանից, փափուկ, թավշե աստիճանից: Ես ընկնում էի խորը, ավելի խորը և անընդհատ նոր անդունդներ էին բացվում ինձ համար...

Հիշողությունս հուշեց, որ այդ ամենն արդեն եղել է և որ հիմա ես պառկած եմ այս բարձին, այս սենյակում, նրա կողքին, չնայած, որ չեմ էլ լսում նրա շնչառությունը. նա քնած է այնպես հանգիստ ու լուռ, ինչպես բալիկը: Աստված իմ, մի՞ թե ես հիմա միայն ուղեղ եմ:

Երբեմն, ինձ պտտեցնող մութ հոսանքը, կարծես թե խաղաղվում էր, և այդ պահին հույս էր արթնանում, որ կգարթնեմ, նորից կզգամ ոտքերս, նորից կլսեմ և կտարբերեմ բույրերը, ոչ թե միայն կմտածեմ: Բայց հերիք էր այդ փխրուն հույսս մի փոքր մեծանար և ամրանար, երբ նորից սկսում էի դանդաղ մեռնել, ասես սև ջուրը սկսում էր փոթորկել և վերցնելով իմ անօգնական մարմինը, նորից շարունակում էր տանել ժամանակից ու տարածությունից դուրս, լիակատար անորոշության օղակներում:

Հիշողությունս ինձ տեղեկացրեց նաև, որ գիշերն ունի իր սահմանները և նրան անպայման կգա փոխարինելու ցերեկը: Նա ինձ հուշեց, որ կարող եմ խմել, համբուրել, արտասովել ու նույնիսկ աղոթել, բայց չե՞ որ միայն ուղեղով աղոթելն անհնար է: Ես գիտեի, որ արդեն զարթնել եմ, որ պառկած եմ այս հունգար աղջկա

անկողնում, նրա փափուկբարձին, այս անսահման մութ գիշերվա մեջ... Այդ ամենը գիտեի, բայց միևնույն ժամանակ վստահ էի, որ մեռած եմ...

Դա ինձ հիշեցնում էր արևածագը, երբ այն սկսում է երևալ դանդաղ, այնքան աննկատ ու թաքուն, որ հետևելն անհնար է: Սկզբում մտածում ես, որ սխալվել ես. Խավար գիշերում, դժվար է հավատալ, որ նուրբ, լուսավոր գիծն ինչ-որ տեղ հորիզոնում, հենց առկայծող լուսաբացն է, որ կա... Մտածում ես՝ սխալվել ես, որ դա տեսիլք է ընդամենը, որը գնալով ավելի ու ավելի իրական է թվում. օդն աննկատ մոխրագույն է դառնում, լույսը գալիս է շատ դանդաղ, բայց գալիս է, սպիտակավուն լաքաները հորիզոնում գնալով մեծանում են և դու կամա-ակամա հասկանում ես, որբացվում է նոր օրը:

Հանկարծ զգացի, որ մրսում եմ: Ծածկոցս մի կողմ էր ընկել և մերկ ոտքերս սկսել էին սառել և մաշկիս վրա սկսեցի զգալ այդ սառնության իրական ուժը: Խորը շունչ քաշեցի և լսեցի սեփական շնչառությունս: Օդի հոսանքը կոպիտ դիպավ դնչիս: Թեքվեցի առաջ, շոշափելով գտա վերմակն ուձածկեցի ոտքերս: Ես կրկին ձեռքեր ունեի, ունեի ոտքեր ևզգում էի սեփական շնչառությունս: Հետո ձեռքս կախեցի անդունդն ու դրա հատակում գտա շալվարս, վերցրեցի ու լսեցի, թե ինչպես գրպանիս մեջ շխկշխկաց լուցկու տուփը:

-Խնդրում եմ, լամպը չվառես,- լավեց նրա ձայնը կողքիս, և նա նույնպես շարժվեց:

-Միգարեթ տա՞մ,- հարցրեցի շշուկով:

-Ըհը,- պատասխանեց նա:

Լուցկու լույսի տակ նա լրիվ դեղնավուն էր թվում: Մուգ դեղնավուն բերան, կլոր, սև, վախեցած աչքեր, մաշկը բաց դեղնավուն ավազի գույն, իսկ մազերն ասես սաթագույն ու պղնձյա լինեին:

Դժվար էր խոսելը, չէի հասկանում, թե ինչից սկսեի: Երկուսս էլ լսում էինք, թե ինչպես է հոսում ժամանակը՝ զարմանալիորեն խիտ աղմուկով, որի հետ թռչում էին վայրկյանները:

- Ինչի՞ մասին ես մտածում,- անսպասելիորեն հարցրեց նա:

Նրա բառերն, ասես ոչ բարձր, բայց դիպուկ կրակոցի նման, որն ուղիղ նշանակետին է կպնում, ինչ-որ պատնեշներ քանդեցին մեջս, ու ես սկսեցի խոսել, չհասցնելով էլ մեկ անգամ ևս նայել սիգարետի կրակից լուսավորվող դեմքին:

Մտածում եմ, թե ո՞վ պառկած կլինի այս սենյակում մի յոթանասուն տարի հետո, ո՞վ նստած կամ թիկնած կլինի այստեղ, ուր հիմա ես եմ պառկած, և ի՞նչ կիմանա իմ ու քո մասին... Ոչ մի բան: Միայն, որ այն ժամանակ պատերազմ էր ու վերջ:

Մենք երկուսս էլ շարտեցինք սիգարեթի կոթուկները մահճակալի ձախ կողմն ու դրանք անձայն ընկան շավարիսվրա: Ես ստիպված էի թափ տալ, որ ընկնեին գետնին ուհիմա դրանք իրար կողք վառվում էին, ասես, մոխրացող ածուխիկներ:

- Ու հետո, ես մտածում եմ, թե ո՞վ էր ապրում այստեղ յոթանասուն տարի առաջ կամ ի՞նչ էր այն ժամանակ այստեղ: Երևի դաշտ, որտեղ եգիպտացորեն էր աճում կամ սոխ, հենց այստեղ՝ գլխիս տակ, և քամին ճոճում էր կանաչ սլաքիկները, և ամեն առավոտ հորիզոնում այդան ծայրության վրա դանդաղ, կամաց-կամաց բացվում էր տխուր առավոտը:

- Չէ,- ցածր ասաց նա,- յոթանասուն տարի առաջ այս տունն արդեն կար:

Ես լռեցի:

- Հա,- շարունակեց նա,- կարծեմ հենց յոթանասուն տարի առաջ պապիկս կառուցեց այս տունը: Այդ տարի այստեղով երկաթգիծ անցկացրին, ու պապիկս սկսեց աշխատել այնտեղ, փող հավաքեց և իր համար տնակ կառուցեց: Հետո կռիվ գնաց, դե այն էլի, գիտես, տասնչորս թվականի, և զոհվեց Ռուսաստանում: Իսկ այստեղ մնաց հայրս... մենք մի քիչ հող ունեինք, բացի այդ, նա նույնպես երկաթգծում էր աշխատում: Նա էլ այս պատերազմին մեռավ...

- Սպանեցի՞ն:

-Չէ, մեռավ: Իսկ մայրս ավելի շուտ էր մահացել: Հիմա այստեղ ապրում է եղբայրս՝ կնոջ և երեխաների հետ: Իսկ յոթանասուն տարի անց այստեղ կապրեն նրա ծոռները:

- Հնարավոր է,- ասացի ես,- բայց նրանք ոչինչ չեն իմանա իմ ու քո մասին:

- Հա, աշխարհում ոչ մեկ չի իմանա, որ դու ինձ մոտ ես եղել:

Ես բռնեցի նրա փոքրիկ, չափազանց նուրբ ձեռքն ու տարա դեպի դեմքս:

Լուսամուտը լցված էր մուգ մոխրագույն մեզով, մի փոքր ավելի լուսավոր, քան գիշերամութն է:

Հանկարծ զգացի, որ նա վեր կացավ անկողնուց, չնայած ինձ չդիպավ էլ, և լսեցի միայն նրա բոբիկ ոտքերի թեթև քայլերը: Հետո հասկացա, որ հագնվում է, չնայած, նրա բոլոր շարժումները ու դրանց ուղեկցող շրշյունները, գրեթե անլսելի էին, միայն այն պահին, երբ նա ձեռքերը տարավ մեջքի հետևը, որ շորը կոճկի, լսեցի նրա լարված և ընդհատ շնչառությունը:

- Այժմ դու պետք է հագնվես,- ասաց նա:

- Ուզում եմ մի քիչ էլ պառկել:

- Պետք է լույսը վառեմ:

- Չէ, թող մի փոքր էլ պառկեմ:

- Բայց մի բան պետք է ուտես չէ՞, գնալուցդ առաջ:

- Ես չեմ գնում:

Ես նորից զգացի, որ նա, այդպես էլ չհագնելով կոշիկի մեկը, հայացքը չռեց այնտեղ, ուր ես էի պառկած:

- Լու՞րջ,- միայն ցածր ասաց նա, ու չհասկացա, վախեցա՞՞՞ էր, թե՞՞՞ զարմացած:

Գլուխս շրջելով, արդեն կարողանում էի պատուհանի մուգ մոխրագույն ֆոնին տարբերել նրա մարմնի եզրագծերը: Անաղմուկ անցնելով սենյակի միջով, վառարանի մեջ փայտեք գցեց, մտցրեց թուղթն ու շալվարիս գրպանից հանելով լուցկին, վառեց:

Այդ շրջյուններն ինձ էին հասնում, ինչպես ցածրադաղակի ճիչ, որն արձակում է ափին կանգնած մարդը, տեսնելով, թե ինչպես է հոսանքը մյուսին տանում իր ոլորապտույտներով: Եվ արդեն հաստատ գիտեի, որ եթե հենց հիմա վեր չկենամ, չորոշեմ անմիջապես լքել այս հանդարտ օրորվող կորուսյալ լաստը, ես կամ կմեռնեմ հենց այստեղ, մահճակալի վրա, կամ էլ ինձ կգնդակահարեն հենց այս բարձի վրա աչալուրջ հետախույզները, որոնցից ոչ մի տեղ չես թաքնվի:

Ես լսում էի, թե ինչպես է նա անորոշ ինչ-որ բան երգում վառարանի կողքին կանգնած, կարմիր թևերով, անաղմուկ թրթռացող կրակին նայելով, ու ինձ թվաց, թե մեր միջև տարածությունն ավելին է, քան ամբողջ աշխարհը: Նախ կյանքի մի հեռավոր ծայրում էր հիմա, երգում էր ինչ-որ երգ իր մասին հավանաբար, և ուրախանում վառվող կրակին նայելով: Այդ ամենը ես հասկանում էի, լսում էի, տեսնում, շնչում էի այրվող թղթի հեղձուկն ու մտածում, որ նա երբեք ինձանից ավելի հեռու չի լինի, քան հիմա, երբ մեզ մի քանի քայլ է ընդամենը բաժանում:

- Դե վեր կաց,- ասաց նա վառարանից չհեռանալով,- դու պետք է գնաս:

Ես լսեցի, թե ինչպես նա կաթսան դրեց կրակին ու սկսեց խառնել: Ցածր և նուրբ ձայներ էին գալիս, երբ փայտե գդալը դիպչում էր երկաթե հատակին և քիչ անց սենյակը լցվեց խանձված այլուրի բույրով:

Այժմ արդեն ամեն ինչ տեսնում էի: Սենյակը շատ փոքր էր: Պառկած էի ցածր, փայտե մահճակալին, կողքս փոքրիկ, հասարակ պահարան էր: Սեղանը, աթոռներն ու վառարանը, ոնց որ թե, ինչ-որ տեղ հետևումս էին: Ահավոր լուռ էր, լուսաբացի խիտ շղարշը դեռ մթնեցնում էր սենյակը:

- Խնդրում եմ,- ասաց նա շշուկով,- ես պետք է գնամ:

- Դու օ՞

- Հա, աշխատանքի եմ և դու էլ պետք է ինձ հետ դուրս գաս:

- Աշխատում ե՞ս,- հարցրեցի ես,- ինչի՞:

- Ի՞նչ հարց ես տալիս:

- Որտե՞ղ ես աշխատում:

- Երկաթգծում:

- Երկաթգծու՞մ: Ի՞նչ եք անում այնտեղ:

- Ռեւսերի փայտերի արանքը խիճ ենք լցնում, ամրացնում ենք ձողերը, որ փորձանքներ չլինեն:

- Այսպես, թե այնպես չեն լինի,- ասացի ես: – Ո՞ր մասում ես: Գրոսվարդայնի ուղղությամբ:

- Չէ, Սեգեդինի կողմը:

- Դա լավ է:

- Ինչո՞վ:

- Որովհետև այդ դեպքում ես քո մոտով չեմ անցնի գնալուց:

Նա թեթև ժպտաց:

- Փաստորեն, դու ամեն դեպքում որոշեցիր վեր կենալ:

- Հա, -ասացի ես:

Կրկին փակեցի աչքերս ու էլի ընկա այն զգվելի անորոշության մեջ, որտեղ չկան բույրեր, ոչինչ չկա, միայն թեթև օրոր է, որը զգում էի, ինչպես մեղմ, հազիվ փշող

զեփյուռ: Հետո հոգոցով բացեցի աչքերս ու ձեռքս տարա դեպի շավարս: Այն արդեն կռկիկ, ծավված դրված էր մահճակալի կողքի աթոռին:

- Հա,- ասացի ես նորից ու կանգնեցի:

Նա կանգնած էր վառարանի կողքին, մեջքով դեպի ինձ, մինչ ես արագ, սովորությանս համաձայն, հագնում էի շավարս, կապում կոշիկներս ու ձգում շինելիս գոտին:

Մեկ բուպե այդպես անշարժ, չկայցրած սիգարեթը բերանիս, նայում էի նրա փոքրիկ, նրբիկ մարմնին, որի եզրագիծն արդեն հստակ գծագրվում էր պատուհանի լուսացող ֆոնին: Գեղեցիկ, փարթամ մազեր ուներ՝ խարույկի հանդարտ բոցի նման:

Շրջվելով իմ կողմը, ժպտաց.

- Հիմա ի՞նչ ես մտածում:

Առաջին անգամ ես նայեցի նրա դեմքին: Այնքան պարզ ու հստակ էր այն: Կլոր աչքեր ուներ, ուր վախը վախ էր, բերկրանքը՝ բերկրանք:

- Էլի ինչի՞ մասին ես մտածում,- կրկին հարցրեց նա, բայց այս անգամ անժպիտ:

- Ոչնչի: Ես անկարող եմ մտածել հիմա, պետք է գնամ որովհետև: Այլ ելք չկա:

- Ըհը,- գլխով արեց նա,- Պետք է գնաս: Ոչինչ չես կարող անել:

- Իսկ դու պետք է մնաս այստեղ:

- Հա, ես պետք է մնամ այստեղ:

- Դու պետք է խիճ լցնես ռելսերի արանքն ու ամրացնես ձողերը, որ փորձանքներ չլինեն, որ գնացքները կարողանան հանգիստ գնալ այնտեղ, ուր փորձանքն արդեն եղել է:

- Հա,- ասաց նա,- դա իմ աշխատանքն է:

Մի շատ նեղլիկ փողոցով մենք իջանք կայարան: Բոլոր փողոցները կայարաններ են տանում, որտեղից մեկնում են պատերազմ: Ճանապարհին մենք մի անկյուն մտանք ու համբուրվեցինք, և միայն այնտեղ, երբ ձեռքերս նրա ուսերին էին, միայն այնտեղ հասկացա, որ նա իմն է: Եվ նա գնաց ուսերը կախ գցած ու ոչ մի անգամ չըջվեց:

Նա լիովին մենակ է այս քաղաքում, ու թեպետ նրան էլ՝ իմ պես, պետք էր կայարան հասնել, Բայց մենք չէինք կարող միասին գնալ: Ես պետք է սպասեի, մինչ նա կթեքվեր անկյունից, այս ծառուղու, որն այժմ անսահման լույսով էր լցված, վերջին ծառի հետևում կանհետանար: Ես պետք է սպասեի և կարող էի գնալ նրա հետևից միայն շատ հեռվից: Ու երբեք էլ նրան չեմ տեսնի: Ես պետք է չուշանամ այդ գնացքից, այդ պատերազմից...

Այժմ, երբ գնում եմ կայարան, իմ միակ բեռն իմ ձեռքերն են, որոնք դրել եմ գրպանս, և աստամներով բռնած վերջին սիգարետիս կոթուկը, որը շուտով կնետեմ: Բայց ավելի հեշտ է այսպես ձեռնունայն գնալ, երբ դանդաղ, անհաստատ քայլում ես գոյությանդ ամենաեզրով և ինչ-որ ակնթարթի կրնկնես այն անդունդը, այնտեղ, ուր բոլորս ենք լինելու մի օր...

Միակ սփոփանքը ճիշտ գրաֆիկով ժամանած գնացքս էր, որն ուրախ սուլում էր եզիպտացորենի և սուր հոտ արձակող լոլիկների դաշտում...